

մէջ՝ ժամանակակից ձեռագիրի մը վերջերը: Իսկ մենք՝ ըստ մեր նախագիծին՝ քանի մը տնայառ պատճառախնդրութիւններով և հակիրճ բանաքննականով մը՝ փակենք այս վերջնութիւն մասն ալ այդ ամիրայական գրուհին:

Օսմանեան պետութեան և ընդարձակածաւալ երկիրին փառաւորութեանց մէջ փառաւորուած, հարստացած, տաղաւարած և ընդարձակուած այս ամիրաներուն մեծ մասը՝ կը բնակէր Պոլիսի նախայիշուած գեղադիտակ արուարձանները, լայնատ (մօտեցուր) արած՝ գետիններու վրայ, բազմայարկ ու բազմասրահ ապարաններու մէջ՝ խոկուած դիւթուած և ճաճանջաւորուած տասապելական խնջոյքներով, շարփներով և խաղարկութիւններով՝ քիչերն անոնցմէ կազմելով ախտագիւտ բացառութիւն մը: Այդ բարեբաստիկ ամիրաներն ունէին՝ ամէնահարկաւորապէս՝ իրենց հետեւորդ աղաները, ոմանք իրենց կանանին, իրենց մանկլաւիկները, իրենց մատանապետներն ու տակառապետները, իրեցից - մէծէնէն - ու հացկատակներն (որոնք խտրալից պատճառներ կ'ըլլան մեծատուններու արտառոց հանոյքներուն և կարմէր անկումներուն), և կարգ մը նախամասնութեանց հետ՝ իրենց արտակարգ մուլութիւններն իրենց նախապաշարունակներն ու յոռի տկարութիւնները, որ ըուն պատճառներն ալ եղած են իրենց կործանումին. և այդ կործանումին առաջին հիմնապէս առնել՝ անկարացած է ժամանակին բարձրաստիճան կղերին մեծ մասին փառասիրութիւնն և հանոյակցութիւնը: Կային այդ ամիրաներուն մէջ՝ տգէտներ, ամբարտաւաններ, մուլեռանդներ ու մանաւանդ անխոհեմներ. կային գիտակներ, համեստներ, ջերմեռանչներ ու խորագէտներ ալ: Եւ այս երկու տեսակը՝ նուազեցաւ միայնակի կամ տեւեց որոշեալ ատեն մը՝ իրեն այս յատկութեանց նուազութեան կամ ամուլութեան յոռութեան կամ լուսաւորութեան համեմատ:

Պատմաբար և քննաբար ալ փիլիսոփայելով հին այս ամիրաներուն վրայ՝ կը գտնենք՝ որ անոնք կատարած

1. Միայն Պալեամբ միլիոն մը կամ գում հոգ ունէին՝ հարեւանցի մը հաշուելով: